# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՎԱՐԴԱՁՈՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

1417 ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Վարդաձոր հեռ. /+374/091550059


,, 19 ,, Մարտի 2013թ. N: 049

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Կից ներկայացվում է Վարդաձորի գյուղապետի 2013թ.-ի մարտի 15-ի թիվ 09 որոշումը:

Հարգանքներով՝

Վարդաձորի գյուղապետ՝ Ռ.Սիրականյան


25 03 2013թ
1636-13

## ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՁՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Որոշում թիվ 09

15-ը Մարտի 2013թ. գ. Վարդաձոր

Վարդաձոր գյուղի Ալաշկերտի փողոցի թիվ 95 հասցեի 05-084-072-012 ծածկագրով առանձնատան, կից հողամասի և շենք շինությունների նկատմամբ Հրանուշ Սիսակի Կարապետյանի գույքային իրավունքները վերականգնելու մասին:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է 1967թվականին, հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64 հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերի պահանջներին, ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նշված տարածքներում: Ղեկավարվելով 2005թ. հասցեների գրանցման մասին ՀՀ կառավարության 2387-Ն որոշման պահանջներով.

**Որոշում եմ՝**

1. Վերականգնել վերը նշված հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Հրանուշ Կարապետյանի /ծնվ. 1939թ./, Սերյոժա Սուրենի Կարապետյանի /ծնվ. 1971թ./, Ստելլա Գուրգենի Կարապետյանի /ծնվ. 1974թ./ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան զբաղեցրած տարածքի և սպասարկման համար անհրաժեշտ 0.782 հա հողամասի և դրա վրա կառուցված 370քմ առանձնատան ու շենք շինությունների նկատմամբ:
2. Շենք շինությունների մակերեսները ենթակա չեն ճշտման ԱԳԿ Մարտունու տարածքային ստորաբաժանման կողմից:
3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի քաղաքաշինության մասնագետի կողմից տրված հատակագծով:
4. Առանձնատանը տրամադրել Ալաշկերտի փողոցի թիվ 95 հասցեն:
5. Առաջարկել ԱԳԿ Գեղարքունիքի տարածքային ստորաբաժանմանը գրանցել Հրանուշ Կարապետյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և շենք շինությունների նկատմամբ և տրամադրել սեփականության իրավունքի գրանցման վկայական:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Վարդաձորի գյուղապետ Ռ. Սիրականյան